

ՄԱՌԻ ԸԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանալի բառեր – Կիլիկիա, պատմիչ, արքա, թագավորություն, պետություն, գորքեր, ճակատամարտ, իշխանություն, հարաբերություններ, պայմանագիր

Կիլիկիայի հայկական թագավորության պատմության ամենակարևոր հարցերից է Եգիպտոսի սուլթանության հետ հարաբերությունների ուսումնասիրությունը: Հայտնի է, որ XIII դարի երկրորդ կեսին Մերձավոր Արևելքում միջազգային իրավիճակը բարդ էր: 1250 թ. Եգիպտոսում իշխանության եկան մամլուքները, որոնք կարճ ժամանակ անց բավական հզորացան և սկսեցին սպառնալ տարածաշրջանի մի շարք երկրների, այդ թվում և Կիլիկիայի հայկական թագավորությանը: Այդ նույն ժամանակ տարածաշրջանում հաստատվել էին նաև մոնղոլները, որոնք, նվաճելով մի շարք երկրներ, մոտեցել էին Կիլիկիայի հայկական թագավորության սահմաններին, որը 1254 թ. դաշնակցեց նրանց հետ, ինչը սկզբնական ժամանաշրջանում շահեկան էր: Կարժ ժամանակ անց թե՛ մոնղոլները և թե՛ Կիլիկիայի հայկական թագավորությունը դարձան Եգիպտոսի սուլթանության թշնամիները, որը նրանց դեմ վարեց մի շարք պատերազմներ: Դրանք շարունակվեցին բավականին երկար և մեծ վնաս հասցրին Կիլիկիայի հայկական թագավորությանը:

Հայ-մամլուքյան հարաբերությունները խիստ սրվեցին հատկապես 1266 թ., երբ Եգիպտոսի սուլթանության զորքերն ավերիչ արշավանք ձեռնարկեցին Կիլիկիայի հայկական թագավորության դեմ¹: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Մառիի լեռնանցքի մոտ, որտեղ հայկական բանակը պարտություն կրեց, որից հետո մամլուքյան բանակն առաջ ընթացավ դեպի Կիլիկիայի պետության խորքերը և նրան մեծ վնաս պատճառեց: Սույն հոդվածում լուսաբանվում են այս ճակատամարտի մանրամասները:

¹ St' u Bibliothèque des Croisades, t. 4, Paris, 1829, p. 504-507, **Հեթում պատմիչ**, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 51, Հաւաքումն պատմութեն Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 163, **Մամուէլ Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց: Յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Վաղարշապատ, 1893, էջ 150, 221-222, *նույնի՝* Մամուէլ Անեցի եւ Շարունակողներ: Ժամանակագրութիւն Ադամից մինչեւ 1776 թ., աշխատասիրությամբ Կարեն Մաթեոսյանի, Երևան, 2014, էջ 253, **Bar Habraeus**, The Chronography, London, 1932, p. 446, **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 246, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 272, **Գրիգոր Ակնեքցի**, Պատմութիւն թաթարաց, Յերուսաղէմ, 1974, էջ 53-54:

Նախ փորձենք պարզել, թե երբ է տեղի ունեցել Մատիի ճակատամարտը, որի մասին որոշ տեղեկություններ են հաղորդում միջնադարյան պատմիչները:

Այսպես, Մատիի ճակատամարտին անդրադարձած առաջին հեղինակներից է Մխիթար Այրիվանեցին, որը նշում է 1261 թվականը¹: Ամենայն հավանականությամբ պատմիչը Մատիի ճակատամարտը շփոթել է մեկ այլ ռազմական բախման հետ: Միննույն թեմային անդրադարձած հաջորդ հեղինակը՝ Վարդան Արևելցին, նշում է, որ այն տեղի է ունեցել «մերձ յաշնան յեղանակն»², առանց ճշգրտելու սակայն տարեթիվը, ամիսը և ամսաթիվը: Նմանատպ տեղեկություն կա նաև Գրիգոր Ակներցու մոտ³: Ինչպես նկատում ենք, թե՛ Վարդան Արևելցին և թե՛ Գրիգոր Ակներցին հստակ տեղեկություններ չեն հաղորդում, թե երբ է տեղի ունեցել Մատիի ճակատամարտը:

Հետազոտվող թեմայի և դրան առնչվող իրադարձությունների մասին վկայում են նաև Հեթում պատմիչը, Հովհաննես Դարդեղը և XIII դարի հիշատակարանների հեղինակներից մեկը⁴, որոնք, սակայն, սահմանափակվում են միայն 1266 թվականը նշելով: Այն, որ ճակատամարտը տեղի է ունեցել 1266 թ., վկայում են նաև արաբական սկզբնաղբյուրները, թեև չեն հստակեցնում կոնկրետ օրն ու ամիսը⁵: Ճակատամարտին անդրադարձել է նաև XIII-XVIII դարերի ժամանակագիրներից մեկը, որը նշում է, որ հայմավուքյան բախումը տեղի է ունեցել 1266 թ. օգոստոս ամսին. «Եւ ի սոյն ամի Սմըլմաթն Մսրայ զաւրաւքն եկն ի Մատի և խանգրեաց զՀայոց զաւրքն, որ անդ կային յամսեանն աւգոստոսի...»⁶:

Մատիի ճակատամարտի համար ավելի հստակ տեղեկություն է հաղորդում ասորի հեղինակ Աբուլ Ֆարաջը (Բար Հեբրաուս), որն այն թվագրում է 1266 թ. օգոստոսի 23-ով, միաժամանակ նաև նշում, որ Լևոն արքայորդին գերեվարվել է օգոստոսի 24-ին⁷: Փաստորեն, եթե վստահենք նրա տեղեկություններին, ապա հարկ է կարծել, որ հայկական և մամլուքյան զորքերի միջև Մատիում տեղի ունեցած ճակատամարտն ընթացել է առնվազն երկու օր՝ 1266 թ. օգոստոսի 23-ից 24-ը:

Ճակատամարտին անդրադարձել է նաև Կիլիկյան Հայաստանի Սմբատ Սպարապետը, որն անձամբ մասնակցել է ռազմական գործողություններին

¹ Տե՛ս **Մխիթար Այրիվանեցի**, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 68:

² Տե՛ս Հաւաքումն պատմութեն Վարդանայ վարդապետի, էջ 153:

³ Տե՛ս **Գրիգոր Ակներցի**, նշվ. աշխ., էջ 60-61:

⁴ Տե՛ս **Հեթում պատմիչ**, նշվ. աշխ., էջ 54, Յոհաննու Դարդեղի ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դարի, կազմեց՝ Ա. Մաթևոսյանը, Երևան, 1986, էջ 342-343:

⁵ Տե՛ս Արաբական աղբյուրներ..., էջ 272-273:

⁶ Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 73:

⁷ Տե՛ս **Bar Habraeus**, նշվ. աշխ., էջ 446:

և Հեթումի Ա արքայի որդիների հետ գլխավորել հայկական բանակը: Ըստ նրա հաղորդման՝ հայկական բանակը մամլուքյան բանակի դեմ է դուրս եկել 1266 թ. օգոստոսի 23-ին. «Գնացին ընդդեմ անօրինացն ի տեղին որ կոչի Մառի, յամսեանն օգոստոսի, որ իգ էր ամսոյն յաւուր երկշաբթի, և անդ օթեվանս կալան իսկ ի լուսանալ առաւոտուն յգշաբթի»¹: Իսկ բուն ճակատամարտը տեղի է ունեցել օգոստոսի 24-ին:

Փաստորեն Աբուլ Ֆարաջի և Սմբատ Սպարապետի տեղեկությունները որոշակի վկայություն են հաղորդում մեր հետազոտության համար: Մյուս պատմիչների մոտ էական տեղեկությունների չենք հանդիպում:

Այժմ տեսնենք, թե ինչ տեսակետներ կան մասնագիտական գրականության մեջ: Այսպես, Բակուրանը, Ս. Բոռնազյանը և Լ. Տեր-Պետրոսյանը² անդրադարձել են Մառիի ճակատամարտին և այն թվագրել 1266 թվականով: Ա. Սուքիասյանը նշում է, որ Մառիի ճակատամարտը տեղի է ունեցել 1266 թ. աշնանը³, Կ. Մուրաֆյանը և Լ. Մկրտումյանը՝ 1266 թ. օգոստոսին⁴, իսկ Մ. Օմանյանը՝ 1266 թ. սեպտեմբերին⁵:

Ինչպես նկատում ենք, մասնագիտական գրականության մեջ ևս տեսակետներն իրարամերժ են: Կարծում ենք, որ Մառիի ճակատամարտը սկսվել է 1266 թ. օգոստոսի 23-ին, սակայն հիմնական ռազմական գործողություններն ընթացել են հաջորդ օրը՝ օգոստոսի 24-ին, որոնց ընթացքում հայկական բանակն ունեցել է ցավալի կորուստներ, ինչպես նաև գերիներ: Սպանվել է Հեթում Ա արքայի որդի Թորոսը, իսկ մյուս որդին՝ Լևոնը, շատերի հետ գերեվարվել է Եգիպտոս:

Կարևոր է նաև ճշել այն հարցը, թե ովքեր են գլխավորել զորքերը: Հայկական գրեթե բոլոր սկզբնաղբյուրները նշում են, որ Կիլիկիայի Հեթում Ա արքան հայկական զորքերի հրամանատարությունը վստահել էր իր երիտասարդ որդիներին՝ Լևոնին ու Թորոսին, սակայն պարզվում է, որ Մառիի ճակատամարտում մասնակցություն է ունեցել նաև Սմբատ Սպարապետը, իսկ այդ իրողությունը մինչև այժմ համապատասխան ուշադրության չի արժանացել հայագիտական գրականության մեջ: Դժվար է պատկերացնել, որ հայոց արքան, լինելով փորձված քաղաքական գործիչ, կարող էր հայկական բանակի հրամանատարությունը վստահել միայն իր երիտասարդ և անփորձ

¹ Սմբատ Սպարապետ, նշվ. աշխ., էջ 246:

² Տե՛ս Բակուրան, Մի տեսութիւն Կիլիկիոյ հայկական իշխանութեան վրայ, Պէրյութ, 1959, էջ 23, Բոռնազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV դարերում, Երևան, 1973, էջ 34, Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, պատմա-քաղաքական հետազոտություն, Երևան, 2007, էջ 292:

³ Տե՛ս Ասուքիասյան Ա., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 77:

⁴ Տե՛ս Մուրաֆյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 434, Մկրտումյան Լ., Հայոց պատմություն, Երևան, 2016, էջ 161:

⁵ Տե՛ս Օմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, Պէրյութ, 1959, սյուն 1943:

որդիներին, որոնցից ավագը՝ Լևոնը, 1266 թ. ընդամենը 30 տարեկան էր: Հասկանալի է, որ Կիլիկիայի ռազմական ուժերի փաստացի ղեկավարը Մառիի ճակատամարտում եղել է փորձառու Սմբատ Սպարապետը, սակայն այս դեպքում նրան ևս վիճակված էր պարտված թողնել մարտադաշտը:

Ինչ վերաբերում է մամլուքյան բանակի հրամանատարությանը, ապա պետք է նշել, որ այդ մասին բավականին տեղեկություններ են հայտնում սկզբնաղբյուրները: Մասնավորապես Սմբատ Սպարապետը տեղեկացնում է, որ սուլթան Բեյբարսը մամլուքյան զորքերի հրամանատարությունը փոխանցել է ճանաչված մարդկանց, մասնավորապես Հալեպի սուլթանին, ինչպես նաև ոմն Մվլմտին, Ալֆիին և ուրիշների. «Եւ ապա առեալ զգօրս իւր գայր մինչեւ ի Հալպ, և եդ զօրապետ զօրաց իւրոց ի մեծամեծաց իւրոյ զոմն Մվլմօթ անուն և երկրորդին Ալֆի, և զսուլտանն Հալպայ...»¹: Մվլմտի մասին տեղեկությունը հաստատում է նաև XIII դարի երկրորդ կեսի մանր ժամանակագիրներից մեկը²:

Քննարկվող խնդրին անդրադարձել են նաև արաբական սկզբնաղբյուրների հեղինակները. մասնավորապես դեպքերի ժամանակակից Աբուլ-Ֆիդան տեղեկացնում է, որ մամլուքյան զորքերը Համաթի տեր ալ-Մալիք ալ-Մանսուրի հրամանատարությամբ են ճամփա ընկել Սսի երկիր և պատերազմել³: Նմանատիպ տեղեկություն կա նաև Սուֆազգալ իբն Աբիլ-Ֆազայիլի, Իբն ալ-Վարդիի և Մաքրիզիի աշխատություններում⁴:

Միանգամայն ակնհայտ է, որ արաբ պատմիչները միահամուռ վկայում են, որ մամլուքյան զորքերի մուտքը Կիլիկիայի հայկական թագավորություն գլխավորել է մեկ հրամանատար՝ Համաթի տեր ալ-Մալիք ալ-Մանսուրը: Կարծում ենք, որ նրանք ավելի քաջատեղյակ կարող էին լինել իրենց զորքերի հրամանատարության մասին, քան հայ հեղինակները:

Այժմ տեսնենք, թե ինչ քանակի զորքերով էին մարտնչում հակառակորդ զորաբանակները: Այսպես, Հեթում Կոռիկոսցին իր ժամանակագրության մեջ նշում է, որ հայկական զորքերը շատ էին՝ «Բազումք ի զաւրացն Հայոց», բայց չի հստակեցնում թվաքանակը⁵: Այս խնդրին որոշակի անդրադարձ է կատարել նաև Սմբատ Սպարապետը, որը, սակայն, բավարարվում է տեղեկացնելով, որ հայկական բանակը բաժանվել էր երեք մասի՝ չնշելով զորքերի թվաքանակը⁶: Սույն խնդրին անդրադարձած հաջորդ պատմիչը՝ Հովհաննես

¹ Սմբատ Սպարապետ, նշվ. աշխ., էջ 246:

² Տե՛ս Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, էջ 73:

³ Տե՛ս Արաբական աղբյուրներ..., էջ 236:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 272:

⁵ Տե՛ս Հեթում Կոռիկոսցու ժամանակագրությունը // Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, էջ 73:

⁶ Տե՛ս Սմբատ Սպարապետ, նշվ. աշխ., էջ 246: Նույն հեղինակի վկայությամբ՝ զորքերի մի մասը հայոց արքայի հետ գնացել է մոնղոլներից օգնություն խնդրելու, սակայն ժամանակին տեղ չի հասել: Երկրորդ մասը պաշտպանելու էր Դուռն կոչվող կիրճերը, իսկ

Դարդելը, հայոց բանակի թվաքանակը ներկայացնում է 15 հազարի սահմանում¹: Հայկական բանակի թվաքանակի մասին նման տեղեկություն է հաղորդում նաև Աբուլ Ֆիդան², թեև նա շրջանցում է մամլուքյան բանակի թվաքանակը: Այս հարցում թերևս միակ հեղինակը, որը հաղորդում է Եգիպտոսի սուլթանության բանակի թվաքանակը Հովհաննես Դարդելն է: Ըստ նրա՝ մամլուքյան բանակի թվաքանակը հասնում էր 45 հազարի³, այն է՝ երեք անգամ գերազանցում էր Կիլիկյան Հայաստանի բանակին:

Ուսումնասիրողներից Գ. Միքայելյանը կարծում է, որ Մառիի ճակատամարտում Եգիպտոսի սուլթանության զորքերի թվաքանակը հավանաբար հասնում էր 25-30 հազարի, ինչի դիմաց հայերը շատ ավելի քիչ զինվոր են ունեցել⁴: Ս. Բոռնազյանը կարծիք է հայտնում, որ մամլուքյան զորաբանակի թվաքանակը հասնում էր 30 հազարի⁵, սակայն հետաքրքիրն այն է, որ թե՛ Միքայելյանը և թե՛ Բոռնազյանը իրենց աշխատություններում չեն նշում այն պատմական սկզբնաղբյուրը, որից օգտվել են: Ժամանակակից մյուս հետազոտողները չեն անդրադարձել այս հարցին:

Կարծում ենք՝ Հովհաննես Դարդելի հաղորդած տեղեկությունը՝ կապված մամլուքյան բանակի 45 հազարի հասնող թվաքանակի հետ, կարող է մոտ լինել իրականությանը, քանզի հայկական բանակի կառուցած ամրությունները հաղթահարելու համար սուլթանության զորքերը պետք է ունենային բացահայտ գերազանցություն:

Անդրադառնանք նաև ճակատամարտի ելքին: Այս մասին սկզբնաղբյուրները բավականին տեղեկություններ են տրամադրում:

Նախ տեսնենք, թե ինչպիսի տեղեկություններ կան արաբ հեղինակների երկերում: Մառիի ճակատամարտի մասին առաջիններից մեկը վկայում է Աբուլ Ֆիդան, համաձայն որի՝ հայերն ամրացրել էին իրենց կիրճերը քարանետ մեքենաներով և այլ զենքերով ու այնտեղ տեղադրել զորքեր, որպեսզի դիմադրեն մուսուլմանական զինվորներին և արգելեն նրանց մուտքը: Բայց մուսուլմանական զորքերը, ինչպես նա վկայում է, ոչ միայն հաղթեցին նրանց, այլև շատերին սպանեցին կամ գերեվարեցին⁶: Մառիի ճակատամարտին անդրադարձած հաջորդ արաբ հեղինակը Մուֆազզալ իբն Աբիլ-Ֆազայիլն է: Նա նշում է, որ հայոց արքան ուժեղ ամրություններ էր կառուցել և պահապաններ կանգնեցրել, սակայն մամլուքյան զնդերին հաջողվել է

երրորդ մասն արքայի որդիների գլխավորությամբ ամրացել էր Սև լեռների կիրճերում՝ արգելալեռու հակառակորդի բանակի մուտքը Կիլիկիայի հայկական թագավորություն:

¹ Տե՛ս Յոհաննու Դարդելի ժամանակագրությունն Հայոց, էջ 15:

² Տե՛ս Արաբական աղբյուրները..., էջ 272:

³ Տե՛ս Յոհաննու Դարդելի ժամանակագրությունն Հայոց, էջ 18:

⁴ Տե՛ս **Միքայելյան Գ.**, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 344:

⁵ Տե՛ս **Բոռնազյան Ս.**, Կիլիկիայի հայկական թագավորության զորեղացումը և միջագային հարաբերությունները XIII դարում, հ. Գ, Երևան, 1976, էջ 713:

⁶ Տե՛ս Արաբական աղբյուրները..., էջ 236:

գրավել այդ դիրքերը և շատերին ոչնչացնել: Շարունակելով իր միտքը՝ պատմիչը նշում է, որ գերեվարվել են Կիլիկիայի բազմաթիվ բարձրաստիճան դեմքեր¹: Ինչպես նկատում ենք, արաբ պատմիչները բավական տեղեկություններ են հաղորդում Մառիի ճակատամարտի վերաբերյալ:

Սույն ճակատամարտի ընթացքի մասին որոշ վկայություններ են պահպանվել նաև հայկական սկզբնաղբյուրներում: Մասնավորապես XIII դարի մանր ժամանակագիրներից մեկը և հայերեն ձեռագրերի հիշատակարանների հեղինակներից մեկը նշում են, որ հայկական բանակը պարտություն է կրել, որի պատճառով սպանվել է նաև արքայի որդի Թորոսը, իսկ մյուս որդին՝ Լևոնը, շատերի հետ գերեվարել է Եգիպտոս. «Ի թվին ՉՏԵ սուլտանն Սարայ Ֆնդուխտարն աւերեց զաշխարհն Կիլիկեցոց և զորդիսն Հեթում թագաւորին զԹորոսն սպանին և զԼևոնն գերի վարեցին...»²:

Փաստորեն երկու հեղինակները նշում են ճակատամարտի ելքի մասին, սակայն այլ մանրամասներ չեն հաղորդում: Այն, որ հայկական բանակը պարտություն է կրել և ունեցել է մեծ կորուստներ, հաղորդում է նաև ժամանակակիցներից Վահրամ Բաբունին.

«Եւ զՀայոց՝ ըն փախուցեալ
Արքայորդիքըն մացեալ,
Որք քաջապէս՝ հանդիսացեալ:
Եւ բազմագոյն՝ հարուած առեալ,
Ապա յետոյ զԼէոն կալեալ.
Եւ զԹորոս՝ ընդ խողխողեալ...»³:

Ի տարբերություն վերը նշյալ պատմիչների՝ Մառիի ճակատամարտի մասին շատ ավելի տեղեկություններ է հաղորդում Հեթում պատմիչը, որը նշում է, որ հայոց բանակը միայն սկզբում է հաջողության հասել, բայց այդուհետև պարտվել է. «...և ելին ընդդէմ եգիպտացոց, և սկսան աջողութեամբ մղել զմարտն: Այլ ի վախճանի ի պարտութիւն մատնեցաւ զօրն Հայոց...»⁴: Ցավոք, նա չի հստակեցնում, թե որն էր հայկական բանակի պարտության իրական պատճառը: Քննարկվող խնդրի մասին առավել մանրամասն տեղեկություններ է հաղորդում Սմբատ Սպարապետը: Նա մասնավորապես նշում է, որ հավատացյալների հայկական բանակը ինչ-որ գերբնական ուժի ազդեցության տակ գրեթե չպատերազմեց և նահանջեց, սակայն արքայի որդիներ Լևոնը և Թորոսը շարժվեցին թշնամուն ընդառաջ, և ճակատամարտի ընթացքում Թորոսը սպանվեց, իսկ Լևոնը, սպարապետի որդի Վասիլը՝ Թաթար մականունով, գերի ընկան:

¹ Տե՛ս Արաբական աղբյուրները..., էջ 236:

² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 342-343, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, էջ 73, 145:

³ Վահրամ Բաբունիոյ, Պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1859, էջ 223:

⁴ Հեթում պատմիչ, նշվ. աշխ., էջ 51-52:

Փաստորեն, Մմբատ Սպարապետը այն միակ հեղինակն է, որը մատնանշում է նաև իր որդու գերեվարման իրողությունը, և սա այն տեղեկությունն է, որը բացակայում է մյուս հեղինակների երկերում: Այն, որ հայոց արքայորդի Լևոնը և շատերը գերեվարվեցին, իսկ Թորոսը սպանվեց, վկայում են հայկական այլ սկզբնաղբյուրներ ևս, մասնավորապես Վահրամ Բաբունին, Մխիթար Այրիվանեցին, Գրիգոր Ակնեցցին, Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկը¹ և ուրիշներ:

Փաստորեն՝ Մառիի ճակատամարտում հայկական բանակն ունեցել է ցավալի կորուստներ: Այս ճակատամարտին Մմբատ Սպարապետի եղբայր Հովհաննես Արքաեղբայրը նվիրել է մի ընդարձակ հիշատակարան, որի ձեռագիրը գտնվում է Երևանի Մատենադարանում: Ըստ Ա. Գալստյանի՝ այդ արժեքավոր վկայության մեջ Հովհաննես Արքաեղբայրը հանգամանորեն պատմում է բոլոր այն մասնակիցների մասին, որոնք կռվել են Եգիպտոսի սուլթան Բեյբարսի զորքերի դեմ²:

Պատմական սկզբնաղբյուրները համերաշխ են ճակատամարտի արդյունքները գնահատելու հարցում: Եգիպտոսի սուլթանի արքունի պատմիչ Մաքրիզին ավելացնում է, որ հայերը կորցրել են իրենց լավագույն և քաջ զինվորներին³:

Ժամանակակից ուսումնասիրողները միահամուռ կերպով Մառիի ճակատամարտում հայոց բանակի պարտության հիմնական ու գլխավոր պատճառ են համարում ուժերի բացահայտ անհավասարությունը՝ եգիպտական զորքերի քանակական գերակշռությունը: Բայց մյուս կողմից հարկ է նշել, որ ճակատամարտի ելքի վրա ոչ պակաս ազդեցություն են գործել նաև տվյալ ժամանակաշրջանում հայկական պետությունում ներքաղաքական սրված հակասությունները, թագավորական իշխանության և կենտրոնախույս ուժերի շարունակական բախումները: Այդ մասին են վկայում նաև օտար պատմիչները: Ըստ նրանց տեղեկությունների՝ բազմաթիվ իշխաններ դավաճանել են Հեթում Ա արքային և իրենց զորքերը չեն ուղարկել մարտի⁴: Նման վարքագծով նրանք հնարավորություն են տվել մամլուքյան զորաբանակին հաղթելու հայկական բանակին, որը մեր թագավորության հռչակումից ի վեր առաջին մեծ պարտությունն էր: Բացի օտարագգի հեղինակների վկայություններից, հայոց իշխանների դավաճանության մասին են վկայում նաև հայ պատմիչները, մասնավորապես Գրիգոր Ակնեցցին⁵:

¹ Տե՛ս **Վահրամ Բաբունիոյ**, նշվ. աշխ., էջ 223-224, **Մխիթար Այրիվանեցի**, նշվ. աշխ., էջ 68, **Գրիգոր Ակնեցցի**, նշվ. աշխ., էջ 53-55, **Սամուէլ Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 151:

² Տե՛ս **Գալստյան Ա.**, Մմբատ Սպարապետ, Երևան, 1961, էջ 36:

³ Տե՛ս **Makrizi**, Histoire des sultans mamlouks d’Egypte, Paris, 1837, t. I, part II, p. 34:

⁴ Տե՛ս **Bar Habraeus**, նշվ. աշխ., էջ 446-447, **Makrizi**, նշվ. աշխ., էջ 34:

⁵ Տե՛ս **Գրիգոր Ակնեցցի**, նշվ. աշխ., էջ էջ 56-59:

Կարծում ենք, որ XIII դարի երկրորդ կեսին Կիլիկիայի հայկական թագավորությունն իր հնարավորություններով ի գործ էր դիմակայելու 45 հազարանոց թշնամու բանակին, եթե իհարկե հայ իշխանները նման դավաճանական քայլի չդիմեին: Կասկածից վեր է այն հանգամանքը, որ Կիլիկիայի հայոց բանակը պարտվեց անառողջ քաղաքական մթնոլորտի պատճառով:

Հարկ է նաև նշել, որ իր բացասական դերակատարումն ունեցավ հայմոնղոլական համագործակցությունը, քանզի եթե չլիներ մոնղոլական գործոնը, ապա Հեթում Ա արքան կկարողանար լեզու գտնել Եգիպտոսի սուլթանության հետ: Իսկ այս պարագայում հայկական պետությունը շարունակեց հավատարիմ մնալ հայմոնղոլական համագործակցությանը, բայց չստացավ ժամանակին սպասվող օգնությունը: Մոնղոլներն իրենց պարտականությունները չկատարեցին. նրանք շատ ուշ հասան Կիլիկիա:

Այսպիսով, Մառիի 1266 թ. ճակատամարտը Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության միջև առաջին լուրջ ռազմաքաղաքական բախումն էր, որի արդյունքում Կիլիկիայի հայկական թագավորությունը տուժեց: Ցավոք, հետագայում անհրաժեշտ եզրակացություններ չկատարեցին հայկական պետության արտաքին գերատեսչության ներկայացուցիչները: Ուստի այս պարտության հետևանքը եղավ այն, որ երկու տարի անց Կիլիկիայի հայկական թագավորությունը ստիպված էր իր գերիներին հետ բերելու համար Եգիպտոսի սուլթանությանը մեծ զիջումներ կատարել և սահմանամերձ մի շարք տարածքներ տալ թշնամուն¹:

Արամ Հովհաննիսյան – Մառիի ճակատամարտի պատմությունից

Հոդվածը նվիրված է Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունների պատմությանը: Հեղինակը մանրամասնորեն ներկայացնում է 1266 թ. Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի սուլթանության միջև Մառիի լեռնանցքի մոտ տեղի ունեցած ճակատամարտը: Մասնավորապես քննարկվում է այն հարցը, թե երբ է տեղի ունեցել այս բախումը, և ովքեր են գլխավորել հայկական բանակը: Այնուհետև, օգտվելով մի շարք պատմական սկզբնաղբյուրների տեղեկություններից, հեղինակը փորձել է բացահայտել հակառակորդ զորաբանակների թվաքանակը, ինչպես նաև ճակատամարտի մանրամասները: Վերհանված են նաև հայկական բանակի պարտության պատճառները:

¹ Վերը նշյալ պայմանագրի մանրամասնություններին կարող եք ծանոթանալ՝ **Հովհաննիսյան Ա.**, Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության միջև կնքված պայմանագրի շուրջ // «ԼՀԳ», 2011, թիվ 1, էջ 126-133:

Արամ Օգաննիսյան – *Из истории битвы при Мари*

Ключевые слова – Киликия, историк, государство, история, войска, битва, король, власть, отношения, царство, договор

Работа посвящена истории взаимоотношений Киликийского Армянского царства и Египетского султаната. В начале статьи подробно рассматривается битва, произошедшая в 1266 году между Киликийской Арменией и Египетским султанатом у Марийского горного перевала. Мы касаемся, в частности, вопроса о том, когда именно произошло это столкновение и кто руководил армянскими войсками. Далее, на основе сведений ряда исторических источников, предпринята попытка установить численность вооружённых сил противника, а также другие подробности этого сражения. В завершение статьи выявляются причины поражения армянских войск.

Aram Hovhannisyan – *From the History of the Battle of Mari*

Key Words – Cilicia, historian, state, history, troops, battle, king, power, relations, kingdom, treaty

The work is dedicated to the history of the relations between the Armenian Kingdom of Cilicia and the Sultanate of Egypt. The article begins with the detailed discussion of the battle which took place near the Mari Pass in 1266 between Cilician Armenia and the Sultanate of Egypt. In particular, it examines the problem when this clash exactly took place and who led the Armenian army. Further, we have tried to find out the number of enemy troops, as well as the details of the battle using the information from a number of historical sources. At the end of the work we have revealed the reasons of the defeat of the Armenian army.

Ներկայացվել է 26.04.2021

Գրախոսվել է 03.05.2021

Ընդունվել է տպագրության 06.07.2021